



Armenian Ministry of Culture



SOPRINTENDENZA SPECIALE P.S.A.E.  
POLO MUSEALE DELLA CITTA' DI VENEZIA  
E DELLA GRONDA LAGUNARE



## ՀԱՅԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԴՐՈՇՄՆԵՐ

### Կորրեր Թանգարան – Հնագիտական Ազգային Թանգարան – Մարչանա Ազգային Գրադարան 16 Դեկտեմբեր 2011- 10 Մայիս 2012

Վենետիկի մեջ 1512 թուականին ծնունդ առած Հայկական տպագրութեան Ե. դարադարձին առթիւ, Վենետիկի Կորրեր Թանգարանը, Հնագիտական Ազգային Թանգարանը և Մարչանա Ազգային Գրադարանին հանդիսական դահլիճները պիտի հիւրընկալեն Հայ քաղաքակրթութեան նուիրում մեծ ցուցահանդէս մը: Հայաստանի և Իտալիոյ Հանրապետութիւններու Նախագահներուն բարձր հովանու ներքոյ կատարուող Վենետկեան այս ցուցահանդէսը պաշտօնական նաւակառիչք պիտի կազմէ՝ յաջորդաբար Հայաստանի մէջ կայանալիք յոբելինական բոլոր հանդիսութիւններուն, գլխաւորութեամբ քաղաքամայր Երեւանի՝ գոր Միացեալ Ազգերու Կրթութեան, Գիտութեան և Մշակոյթի Կազմակերպութիւնը (UNESCO) Գրքի համաշխարհային մայրաքաղաք յայտարարած է 2012 թուականի տեւողութեամբ:

Ցուցահանդէսի նախաձեռնողներն են՝ Հայկական գրատպութեան 500-ամեակի Պետական յանձնաժողովը՝ նախագահութեամբ ՀՀ Նախագահին, ՀՀ Մշակոյթի Նախարարութիւնը, Վենետիկի Քաղաքային Թանգարաններու Հիմնարկը, ՀՀ Հռոմի Դեսպանութիւնը, Միւլիթարեան Միաբանութիւնը, Վենետիկ քաղաքի և Վենետկեան Լճակի Եզրամասերու համայնքներուն Պատմական, գեղարուեստական և ազգագրամարդաբանական ժառանգութեան և Թանգարանային բեւեռին վերահսկող յատուկ Գերատեսչութիւնը և Մարչանա Ազգային Գրադարանը: Ցուցահանդէսին կազմակերպութիւնը յանձնուած է ՀՀ Մշակոյթի Նախարարութեան և Վենետիկի Քաղաքային Թանգարաններու Հիմնարկին համատեղ գործակցութեան:

Ցուցահանդէսի կարգաւորողներն են՝ Գարրիէլլա Ուլուհոճեան, Հ. Լեւոն Զէքիեան, Վարդան Կարապետեան, որոնց վստահուած է գործին գիտական ղեկավարութիւնը: Ցուցահանդէսի հիմնական առաջադրանքն է՝ ընծայել այցելուին ժամանակագրական ու բնանիւթային դասաւորումով համալրուած ուղեձիւր մը: Պիտի ցուցադրուին՝ Հայաստանի ու Եւրոպայի թանգարաններէն ու գրադարաններէն ժամանած աւելի քան երկու հարիւր արուեստի գործեր, ընդ որս՝ հազուագիւտ ձեռագրեր ու մանրանկարներ – որոնցմէ ոմանք բացառապէս այս առթիւ իրար պիտի վերագտնեն –, առաջնորդելու համար այցելուն ճանչնալու և ըմբռնելու՝ հոգեւոր, գեղարուեստական, ճարտարապետական, տնտեսական և գիտամտաւորական ոլորտներուն մէջ Հայկական քաղաքակրթութեան բարձրագոյն նուաճումները: Ցուցահանդէսի Կատալոգը, որ կը պատրաստուի միջազգային ճանաչում վայելող և առաւելաբար Իտալիոյ մէջ գործող հայագետներու մասնակցութեամբ, պիտի հրատարակուի Սկիւրա հրատակչութեան կողմէ:

\*Խաչարէր, ժանեկանման քանդակներ, երփներփեան մանրանկարներ, սրբազան ճարտարապետութեան դրասանգներ ու ցուքեր, ականակոտ մասնատուփեր, պահուած՝ դարերով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մօտ, պիտի զուգակցին Հայոց հողի հնադարեան նուագին՝ որ պիտի թրթռայ ձայնական յատուկ սարքաւորումներու մէջէն, ուղեկցելու համար այցելուին՝ Քրիստոնէութեան արշալոյսէն սկսեալ Հայ միջնադարեան քաղաքակրթութեան բեղուն ու երկար ուղեւորութեան երկայնքին:

Ցուցահանդէսը մասնաւոր ուշադրութիւն պիտի դարձնէ Հայերու բազմադարեան ու ճոխ յարաբերութիւններուն ամենազան ժողովուրդներու և մշակոյթներու հետ՝ Եւրոպայէն մինչև Էնաւոր Արեւելք: Ցատկապէս լուսարձակի տակ պիտի դրուին, պատմական փաստաթուղթերու, ձեռագիրներու և արուեստի գործերու ընդմէջէն, Վենետիկի մէջ Հայոց ներկայութեան զարգացումներն ու սխրանքները, ինչպէս նաեւ իրենց նկատմամբ Վենետիկցիներու հայեացքը՝ Անդորրաւետ Տէրութեան, Սերենիսիմայի, քաղաքական, տնտեսական, գրական ու գեղարուեստական շրջածիրին մէջ:

Վերջին բաժինն մէջ, շնորհիւ մեծարժէք ձեռագիրներու ցուցադրութեան, լուսամուտեր պիտի բացուին Հայոց գիտութեան, աստուածաբանութեան, իմաստասիրութեան, պատմագրութեան և գրականութեան վրայ:

Առանձին բաժին մը պիտի յատկացուի՝ Հայ իրականութեան մէջ 1512 թուականէն սկսեալ տպագրութեան թափանցումին և զարգացումներու մասին: Այստեղ պիտի ցուցադրուին աշխարհատարած հայ գաղութներու կոտ և զգլխիչ ցանցոստայինն մէջ արտադրուած տպագրական լաւագոյն նմոշները:

Պատշաճ լոյսի տակ պիտի դրուի Հայ-Վենետկեան տպագրութեան փառայեղ աւանդը, որ իր զագաթնակէտին հասած է շնորհիւ Միլիթարեան Հայրերու ջանադիր և լուսամիտ նուիրումին:

Հուսկ, այցելուները հնարաւորութիւնը պիտի ունենան որոնելու, ցուցասրահներէն դուրս, Վենետիկի մէջ սփռուած հայկական վայրերն ու յիշատակները, հետեւելով՝ կարգաւորողներուն կողմէ պատրաստուած մասնաւոր ուղեգիծերու, սկսեալ Ս. Ղազարու Մայրավանքէն, «Երազներու կղզի» վերանունուած, ուր պիտի տեղափոխուի, Ցուցահանդէսի աւարտին, շարունակելու համար ցուցադրուիլ Վանքի թանգարանին մէջ, Ցուցահանդէսին Հայ-Վենետկեան փոխառնչութիւններուն յատկացուած բաժինը՝ մինչև 2012 թուականի ամառը:

